

ՀԱՅԲ

Հ Ա Ն Դ Ե Ս

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ա Մ Ե Ն Ա Մ Ս Ո Յ 1 Ի Ն Ե Ի 15 Ի Ն

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէն կամ 10 ֆրանք:

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն:

Entered as second-class mail matter, at P.O. New York, NY

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Ձոհողութիւն պայման փրկութեան. — Նոր հրատարակութիւն. — Նամակ առ խմբագիրն. — Կեդրոնական Յանձնախմբի խնդիրն. բարի լուր մի Հայոց Խրախուսական Միաբանութեան կողմէն. — Պաասխան Յանձնախմբին Նիւ Եորքի — Նամակ փարկէն. — Նամակ Կ. Պոլսէն. — Նամակ Սեբաստիայէն. — Եզրկտական նամակներ. Նամակ Գ. — Մըշոյ Դաշտը. — «Մարգարան»ի լեզուն. — Նամակ Կիլիկիայէն — Այլ և Այլք:

ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ

ՊԱՅՄԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ

Ա.

ՆՈՒԵՐ, որ մեր ին նշանակել կը թուի, արարածէն առ Արարիչն ընծայուած բանն է շնչաւոր կամ բուսական, մինչ զոնն է կենդանի: Վարդավառի տօնին կ'երեւի թէ մեր Հեթանոս նախնիք վարդ, զթագուհին ծաղկանց, կը վառէին ի նուէր Դից: Նոյն տօնին իրարու վերայ ջուր նետելու սովորութիւնն զոր ցայսօր կը պահեմք, կը թուի մաշած միացորդն լինիլ աւելի հին Հեթանոսական արարողութեան մի յորում մեր նախնեաց նախնիք մարդկային զոհեր կը նուիրէին սրբազան գետոց: Զոհն առաւել է ուրեմն քան զնուէր:

Կրօնական խորհրդոյ չըջափոխութեան շնորհիւ զոհողութիւնն ալ աւելի փափուկ և միանգամայն աւելի բարձր և իմաստուն դարձած է: Այժմ քաղաքակիրթ հաւատացեալն ոչ զիւնքն և ոչ զիւրն կը նուիրէ հրոյ կամ ջրոյ, բայց կ'ապրի նուիրելով իւր գոյութիւն և իւր գոյք իբրեւ յարատեւ զոհ բարւոյն և ճշմարտին:

Զոհողութիւն կամ նուէր բառն այժմ ևս ինչպէս ի հնումն, կը պարունակէ երեք էական գաղափար — (1) յօժարութիւն զոհելոյն. (2) գերազանց որակ նուիրեալ բանին և (3) աւելի ևս գերազանց կամ մեծագոյն լինելն այնոր որում կը մասուցուի զոհն:

Բ.

Հայ Ազգին փրկութիւնն զոհիւք և նուիրօք միայն պիտի գործուի:

Եղած զոհողութեանց նայելով, սակայն, ստիպուած է մարդ Հետեցունելու թէ Հայերս դեռ ըմբռնած չենք թէ ո՞րքան թանկ, ո՞րքան մեծ բան է այն զոր

ձեռք բերել կ'ուզեմք, այդ պատճառաւ մեր ժամանակին և դրամին աւելորդէն հազիւ կէս յօժարութեամբ կուտամք, ինչ որ զոհողութիւն կամ նուէր լինելէ շատ հեռի կը մնայ:

Կան նաև բազումք որք խնդրուած բանին յոյժ թանկ լինիլն քաջ գիտեն և սակայն չեն հաւատար թէ հնար է զայն ձեռք բերել, հետեապէս և զոհողութիւն ընել չեն ուզեր:

Նոքա անդէտ են և սոքա անհաւատ:

Ներկայ ազգային յազմունքէն շատ առաջ գըտնուած է Հայ որ իւր միլիոններն առաջարկած է տալ վեհապետի ումեմն իբրեւ գին ինքնօրէն Հայ Նահանգի մի հաստատման: Այժմու մեր միլիոնատեարց մէջէն չեղաւ դեռ ոք որ իւր աւելորդէն գոնէ սայր յօգուտ ազգային դատին:

Հաւատք թերի է, յոյս նուազեալ և եռանդ չիջեալ այժմ երբ Հայ Ազգն իւր հոգւոյն բոլոր ընդունակութեամբ խանդավառեալ պէտք է լինէր, ազգային ազատ թերթերու մէջ խորհող Հայոց հասուն մտքերն առատօրէն պէտք է հոսէին, դրամն աղբիւրի պէս վազէր և աշխատութիւնք հզօրապէս կազմակերպուէին:

Փռանսացիք 1870ի մեծ յաղէտն դարմանելու համար տուին, տուին անմուռնչ և անխոնջ մինչեւ չորս հազար միլիոն Փրանք: Իտալացիք տրոց սոսկալի ծանրութիւնն կը կրեն տարիներէ ի վեր յապահովութիւն հայրենի ապագային: Յոյն հարուստներէն երբեմն այս կամայն անձն միլիոններ միահաղոյն կը նուիրէ յօգուտ հելլենական ազգին զօրութեան կամ ի զարգացումն նաւատորմին: Օտար ազգեր միլիոններ ու միլիոններ կը զոհեն, երկին երկիր կը շարժեն իրենց գործեր ի գլուխ հանելու համար, իսկ մեք Հայերս, խղճալի՜ բան, կը թուիմք կարծել թէ տարին մի քանի հազար Փրանք և մի քանի յօգուած հերիք են Հայ Ազգն ալ ազգաց կարգն անցունելու ահագին գործին համար:

Ազգային զարգացման նպատաւոր քաղաքական պայմանն զոր ձեռք բերել կ'ուզեմք, անգի'ն է, և մեք անմիտ եղած կը լինիմք եթէ յուսամք ձեռք բերել զայն աժան խօսքերով և անարժէք նուէրներով:

Եթէ պէտք է թերթ հրատարակել, հարկ է որ ազգին քան զամենայն տաղանդաւոր անհատներն իրենք գիրենք նուիրեն զայն խմբագրելու:

Եթէ Ազգային Մետուկ մի պէտք է հաստատուի ուր մտնեն և ուրկէ ելնեն նուէրք և օգնութիւնք յօգուտ ազգային դատին, հարկ է որ Մետուկն լինի արժանահաւատ և պատասխանատու մարմնոյ ձեռքն:

Եթէ պէտք է ինքնապաշտպանութեան միջոցներ ընձեռել Հայաստանի և Զէյթունի հարստահարելոց,

Հարկ է որ Ազգին կարողագոյն անհատներն յանձն առնուն զայդ ընելու գծուարին գործն:

Ազգին հզօրագոյն մտքերն և բարձրագոյն տաղանդներն պէտք է նուիրուին զայն փրկելու, ոչ թէ անպիտան կամ անձեռնհաս մարդիկ ելնեն սիրտ խառնել և գործ աւրել խօլարար: Խօլք ազգին զոհ չեն լինիր, ազգն իրենց կը զոհեն:

Գ.

Ձոհողութեան օրինակ տալ մասնաւորապէս անոնց պարտքն է որք ազգն ի չաւիղ փրկութեան առաջնորդելու ելած են:

Առաջնորդաց ձեռքն է արդարեւ ժողովուրդն. կրնան զայն թմրեցունել, կրնան զայն խանդավառել իրենց օրինակաւ:

Առաջնորդաց նայելով մեծատունք պիտի տան, և քաջք պիտի նուիրուին:

Մեծ զոհողութիւնն զոր գործիչն պարտի յօժար լինիլ ընելու, է բռնել խոնարհ դիրք և առնուլ երկրորդական աթոռ երբ գործոյն յաջողութիւնն այնպէս պահանջէ: Նա պատրաստ պիտի լինի ի հարկին գործ կատարել առանց անոր գործիչն ճանչուելու:

Երբ գործիչ մի ուզէ ուրիշ գործիչներու հետ միանալ այն բացարձակ պայմանաւ որ ինքն լինի գործոյն ղեկավարն, նա կը ցուցնէ թէ ինքն զոհողութիւն ընելու յօժար չէ:

Երբ գործիչ մի մերժէ ուրիշ գործիչներու հետ միանալ ինքզինք անկարօտ համարելով գործակիցներու, կամ չուզելով որ այլք ևս գործիչի փառաց և այլ իրաւանց մասնակցին, նա կ'ապացուցանէ թէ ինքն զոհողութիւն ընել չգիտէ և ոչ ալ գործոյն մեծութեան վերայ գաղափար ունի:

Երբ մարդ մի կ'ուզէ հաւասարացնել թէ ինքն հայրենեաց սեղանին վերայ զոհ կը նուիրէ զինքն, և սա կայն պատուոյ, շահու և փառքի ճիշդ և գծուծ հաշիւներ կը բռնէ. նա ինքզինք կը խաբէ:

Ժողովուրդն ուշ կամ կանուխ կը ճանաչէ իւր հանրային մարդոց ներքին արժէքն: Ամերիկացի հանրային պաշտօնեայ մի ճշմարտիւ ըսած է թէ կարելի է բոլոր ժողովուրդն խաբել քիչ մի ժամանակ, նաեւ կարելի է ժողովրդեան մէկ մասն խաբել բոլոր ժամանակ բայց անկարելի է բոլոր ժողովուրդն խաբել բոլոր ժամանակ:

Դարձեալ կ'ըսեմք, Գործիչ մի որ ի զոհաբերութիւն կը յորդորէ զժողովուրդն, պարտի նախ ինքն զոհողութեան օրինակ տալ. թող չկարծէ թէ ինքն կըրնայ զոհողութեան հրաժարելով հանդերձ զժողովուրդն մղել յանձնուիրութիւն:

Հայրենեաց փրկութեան պայմանն է ժողովրդեան անձնուիրութիւնն, և ժողովրդեան անձնուիրութեան պայմանն է առաջնորդներու անձնուիրութիւնն:

Թող դողան առաջնորդք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

Հ Ա Յ Ր Ի Կ

Մ. Ս. Գաբրիէեանի 29 երեսէ բաղկացեալ մէկ աշխատասիրութիւնն է Խրիմեանի վերայ:

«Հայք»ի մէջ չափազանց երկար չընելու համար յապաւումս երկու հատուածներ (բան առ Ազգն և բան առ Հայրիկ) կան այս տետրակի մէջ հանդերձ լաւ յաջողեալ պատուական պատկերովն Հայրիկի:

Գինն է 10 սէնթ կամ 50 սանթիմ

ՆԵՄՆԿ ԸՈՒԽՄԻՆԳԻՐՆ

Սուրբաբայ 12 Յունիսի 1892

Մեծապատիւ Տիար Մ. Ս. Գաբրիէլեան, Դոկտոր. Խմբագիր-Տնօրէն «Հայք»ի Ի նիւ Եօրք

Ազնիւ Հայրենակից,

Սովաւ պատիւ ունիմք խոստովանիլ զստացումն 5 Ապրիլի թուակիր պատուական նամակին Ձեր, և զոր ընթեռնելով առաջի վերջին ժողովոյն մեր որ տեղի կալաւ ի Չիրդում անցեալ ամսոյ՝ Չերմ ընդունելութեան և համակրանաց արժանացաւ յամենեցունց. և յանուն Միաբանութեանս փութամբ սովաւ մատուցանել Ձեզ զանկեղծ շնորհակալիս մեր վասն պատուական ուշադրութեան Ձեր:

Տիեզերական Միութեան կազմութիւնն, որում այդչափ եռանդեամբ և կորովով ջատագով հանդիսացեալ էք, մեծ պարծանք և երախտագիտութեամբ նրկատէ Միաբանութիւնս, որ և յօժարութիւն յայտնեալ է զամենայն ջանս իւր ի գործ դնել՝ ըստ նիւթական և ըստ բարոյական կարողութեանցն իւր նպաստել նմին:

Ընդունեցէ՛ք, Ազնիւ Հայրենակից, զհաւաստիս խորին համակրանաց մեր

Ի Դիմաց Հ. Խ. Միաբանութեան

Քարտուղար

Նախագահ

Յ. ՏԷՐ Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ

ԴԱԻԻԹ Ս. ՆԱՀԱՊԵՏ-ԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՉԱԽՄԻԻ ԽՆԴԻՐՆ

ԲԱՐԻ ԼՈՒՐ ՄԻ ՀԱՅՈՑ ԽՐԱՆՈՒՍԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷՆ

ՀԱՅՈՑ ԽՐԱՆՈՒՍԱԿԱՆ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի Սուրբաբայ, 12 Յունիս 1892

Մեծապատիւ Տիար Գ. Գառապրեան Ատենապետ Հ. Հ. Յանձնախմբի

Ի նիւ Եօրք

Մեծապատիւ Հայրենասէր,

Պատիւ ունիմ սովաւ ծանուցանել Ձեզ զի ստացեալ եմ ի դէպ ժամու Ձերդ Ծրագիր կազմակերպութեան Հայ Գաղթականաց՝ և եղեալ զայն առաջի ընդհանուր ժողովոյն մեր որ տեղի կալաւ ի Չիրդում անցեալ ամսոյ՝ մեծ հաճութիւն զգամ յայտնել զի առանց որոք վարանման միաձայն հաւատութիւն ստանալով յանդամոց Միաբանութեանս հետեւեալ որոշմունք վճռեցան:

1. Ձի Միաբանութիւնս նկատէ զԾրագիր Յանձնախմբիդ յոյժ գործնական և օգտակար ի բարեւոք լուծումըն Հայկական Խնդրոյն, կամ որ նոյն է ի ձեռս բերելոյ զազատութիւն հարստահարեալ եղբարցն մեր՝ որք ընդ անամօթ լծով բռնութեան Թուրքաց հիւծին:

2. Ձի Միաբանութիւնս ամենայն ջանս ի գործ դնէ դրամ հանգանակել ի նպաստ կեդրոնական Միութեանն:

3. Ձի Միաբանութիւնս այս՝ որպէս գրաւական անկեղծ համակրանացն իւր, կանխիցէ առաքել առ Ձեզ 600 (վեց հարիւր) Փրանք—որպէս ի ներփակեալ ցուցակիս— առ ի ունել ընդ տրամադրութեամբ կազմել ի կեդրոնական Միութեանն—որոյ կազմութիւն կարի դժբաղդաբար մինչ ցարդ չէ ի գլուխ ելեալ:

Ուստի Պատիւ ունիմ ներփակել պահանջ-փոխանակագիր մի վերոյիշեալ գումարոյն յաջող Ձեզ գորոյ ստացումն խնդրեմ հաճիք խոստովանիլ:

Փութամ նաև յայտ առնել Ձեզ գի ի նոյն ժողովի առհասարակ խորին ցաւ յայտնեցաւ յազազս դժուարութեանցն և խոչնդոտից որք արգելք եղեն վաղ իսկ ի գլուխ հանելոյ զգովելի նպատակ Տիեզերական Միութեան՝ կամ միութեանց մասնախմբոցն ի մի կեդրոնացման. և այսոքիկ դժուարութիւնք ի կողմանէ հայրենաց սիրաց մերոց որք անշուշտ առաջինք պարտ էին լինիլ մասնակցելոյ այս փրկաւէտ գաղափարին և քաջալերելոյ հանրութեան:

Թէպէտ ո՛չ դուզնաքեայ ինչ աշխատութիւնք գործոյն՝ զոր հայրենասիրական եռանդով ստանձնեալ էք, և ի պաշտպանութիւն որոյ օրինակելի հաստատամտութեամբ ստիպեալ էք տանիլ անարգանաց ի կողմանէ զեղծ մամլոյն, ուրախութիւն մեծ զգամք տեսանել գի այդչափ խոչք և խռթք սրտարեկ չեն արարեալ զՁեզ ձեռնթափ լինիլ ի գործոյ. և մեծ յուսով եմք զի ընդհանուր Հայ Գաղթականաց հասարակութիւն ի վերջոյ քաջ խելամուտ լիցի մեր ազգային հանգամանաց կարի ցաւալի դրութեանմ և ամենայն ամկեղծ սրտօք փութացի ի ձեռնադրութիւն և ի պաշտպանութիւն սուրբ գործոյն զոր Դուք և պատուական աշխատակից եղբարք Ձեր այդպիսի հաստատուն համոզմամբ պաշտպան հանդիսացեալ էք:

Յուցակ քուէից, ըստ պահանջելոյ երկրորդ յօդուածոյ Ծրագրոյն Ձեր, առաքեցից առ Ձեզ ըստ պատշաճի առաջիկայ պատեհութեամբ:

Ընդունեցէք մեծ. հայրենասէր, զմեծարանաց և զխորին համակրանացն մեր զհաւաստիս.

ՄԻՆԱՍՏԵՐ Դ. Ս. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
Նախագահ

Յուցակ հանգանակութեան ի նպաստ կեդրոնական Միութեան, որպէս վճուեալ յընդանուր ժողովի Միաբանութեանն ի 21 Մայիսի 1892.

Անունը նուիրատուաց	Նուէրք
Հ. Խ. Միաբանութեան Սնտգէն	Փր. 292 50
Մ. Տէր Դ. Ս. Նահապետեան անդամ Հ. Խ. Մ.	„ 51 25
Հայ արհեստաւոր մի	„ 51 25
Սամ Յովակիմ	„ 51 25
Ե. Գ. Եղգար	„ 51 25
Պ. Պողոս	„ 41 00
Գ. Խ. Թադդէսեան	„ 20 50
Յ. Գ. Տէր Կարապետեան	„ 20 50
Յ. Տէր Կ. Յորդանանեան	„ 20 50
Ամբողջ	Փր. 600 00

ՊԱՏԱՍԽԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻՆ ՆԻԻ ԵՈՐԲԻ

202 W. 23rd St. 16 Օգոստոս 1892
New York

Մեծայարգ Տիար Տէր Դաւիթ Ս. Նահապետեան
Նախագահ «Հայոց Խրատուական Միաբանութեան»
Ի Սուրբաթայա, Ճափա

Մեծայարգ Հայրենակից,

Մեծաւ խնդութեամբ ստացանք ձեր պատուական նամակ 12 Յունիս 1892 թուակիր, հանդերձ վեց հարիւր Փրանքի պահանջ-փոխանակագրովն զոր հաճած էք յանձնել մեզ իբրև աւանդ՝ զնելի ընդ սրամագրութեամբ ապագայ կեդրոնական Յանձնախմբին:

Յանձնախմբւո՞ւ կը փութայիւր շնորհակալիք մատուցանել Ձեզ այն վստահութեան համար որով պատուած էք զինքն, և միանգամայն իւր սքանչանքն յայտնել Ձեզ՝ Միաբանութեանդ իմաստուն և գործնական հայրենասիրութեան վերայ: Յանկեղծ սրտէ կը շնորհաւորեմք զՄիաբանութիւնդ այն արիական և անձնուէր քայլին համար զոր առած է վեհանձն հայրենասիրութեամբ, և տարակոյս չունիմք թէ բազում տիրեալ հոգիներ պիտի զուարթանան և շատ վարանամիտներ պի-

պի ցունց առնուն ի լուր ձեր այս հայկարժան նախաձեռնութեան, և կեդրոնացման մեծ խնդիրն նոր փութով յառաջ պիտի մղուի դէպ ի բարի վախճան և կատարումն:

Պարտիմք նաև տեղեկացունել զՁեզ, Տէր, թէ Յանձնախմբւո՞ւ իւր այս օրուան նստի մէջ քուէարկած որոշման համեմատ կը գրէ Փարիզի Հայրենասիրական Յանձնախմբին որ նա յանձն առնու կեդրոնի խնդիրն յառաջ մղելու մասնաւոր պաշտօնն, քանզի խնդիրն բաւական ծեծուած և մաքերն պատրաստուած լինելով՝ այժմ գործնական ընթացքի մէջ մանեւ ժամ է, և հորիկ է որ քան մերս աւելի կեդրոնական դիրք ունեցող և աւելի կարող Յանձնախմբւո՞ւ մի յանձն առնու առաջնորդելու գերն:

Գալայոյս եմք թէ Փարիզեան Յանձնախմբւո՞ւն պիտի ընդունի մեր խնդիրն և այնպէսով գործն աւելի փութով և ազդուապէս յառաջ պիտի երթայ: Այս այսպէս լինելով մասածեցինք թէ 600 Փրանքի գումարն փոխանակ մեր քով պահպանելու, լաւ ևս ըրած կը լինիմք եթէ ձեզ վերադարձունեմք որպէս զի երբ Փարիզի Յանձնախմբւո՞ւն գործոյն ղեկավարութիւնն ստանձնէ, յայնժամ դուք ուղղակի նմա յանձնէք ձեր առատաձեռն և անդրանիկ նուէրն առ կեդրոնական Յանձնախմբւո՞ւն: Համարձակեցանք ուրեմն ներկայիս ներփակեալ վերադարձունել առ Ձեզ նոյն գումարն, գիտնալով թէ մասնաւոր դժուարութեան պատճառ չպիտի լինի այս վասն Միաբանութեանդ՝ երբ յանձնէ զնոյն Փարիզեան Յանձնախմբին:

Կրկնելով մեր ջերմ շնորհակալիքն և մեր սքանչանաց անկեղծ հաւատին, միամբ, Մեծայարգ ատենապետ, խորին յարգանօք,

Ի դիմաց Նիւ Եորքի Հ. Հ. Յանձնախմբին
Ատենապետ
Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ
(Կնիք Յանձնախմբին)

ՆԵՄԱՆԿ ՓԵՐԻՕԴԻՆ

Բարիկ 1 Օգոստոս 1892

Մեծապատիւ Տիար Տօք. Մ. Ս. Գաբրիէլեան
Տէր խմբագիր «Հայք» ազգագուտ հանդիսին
Ի Նիւ Եորք

Տիար Խմբագիր,

Բարիզաբնակ և այլուր գտնուող հայրենակցաց բազմաց կողմանէ, վասն Միութեանն հիմնադիր բարեյիշատակ մեծ հայրենասիրին, Գաբրիէլ Էգնաեանի, մի երախտագիտական ցոյց ընելու համար եղած առաջարկութեանց առթիւ, Միութիւնս ինիստ գումարեալ Յուլիս 16ին, որոշեց ազգային ընդհանրական հանգանակութեամբ՝ նորա շիրմին վերայ մի կիսարձանի կանգման նախաձեռնութիւն ստանձնել, և որոյ կիրառութիւն յանձնեց եռանդամ մասնախմբիս:

Արդ՝ դամք ներկայիւս խնդրել Ձեզ, զի Ձեր ազգագուտ պատուական թերթի միջոցաւ ծանուցանէք զայս Ձեր ընթերցողաց, և եթէ հնար է՝ մի հանգանակութիւն բանաք Ձեր թերթի միջոցաւ:

Հաճեցարուք կանխաւ ընդունիլ մեր ջերմ շնորհակալիքն, հանդերձ մեր խորին յարգանաց:

Ատենապետ
Խ. ՀԻՆԻՔԻՍՏՈՒՆՅԵՆՏԵԱՆ
Ստենապետ
Յ. ԻՍԿԵՆՏԵՐ

Գանձապետ
ԳԻՈՐԳ ԷՔՄԷՔՏԵԱՆ
(Կնիք Միութեան)

Յ. Գ. Դիր թէ զրամ յղել առ J. Iskender
10 bis Rue de Chataudun
PARIS

ՆԱԽԵՎ Կ. ՊՈԼՍԷՆ

Երբեմն խոստովութիւնը օրինազանց համարուողն էր, այժմ օրինապահներն իսկ կարգ մը խոստովանեց կ'ենթարկին: Անցագիրներու և հրատարակութիւններու մասին ծիծաղելի լինելու աստիճան ծայրայեղ խոստովութիւնը կը գործադրուին այժմ:

Անցագիրներու խոստովութիւնը գլխաւորաբար Հայոց Ամերիկա երթալն արգելելու համար է, սակայն զարմանալին այն է որ մինչ մէկ չողմէ այդ հեռաւոր ճամբորդութեանն դիտում կամ կարողութիւն չունեցողները պարապ անզը գծաւորութիւններ կը կրեն և իրենց գործէն ետ կը մնան, միւս կողմէ երիտասարդներ կը յաջողին խուճապ խուճապ ուղևորել յԱմերիկա: Երբ ուէ Հայ Թուրքիոյ մէկ քաղաքէն Կ. Պոլիս գայ, իւր անցագիրը և համախոյն թէսքէրէմ վար կը դրուին որչափ ալ որ կանոնաւոր ըլլան, և օրեր յետոյ այդ թէսքերն իրեն կը յանձնուին, պայմանաւ որ չորս հոգի վկայութիւն տան իւր պատուաւոր անձ մը ըլլալուն և երաշխաւոր ըլլան օտար երկիր և իմասնաւորի Ամերիկայի շփոխելուն: Իսկ եթէ Հայ մը Կ. Պոլսէ կամ օսմանեան ուրիշ նաւահանգիստէ մը նաւ նստի Տարսանէլ, Ձմիւռնիս կամ վերջապէս Եւրոպայի ճամբուն վրայ գտնուող օսմանեան նաւահանգիստ մ'երթալու համար, չորս անձինք պէտք է երաշխաւոր ըլլան իրեն համար թէ Եւրոպայ կամ Ամերիկա պիտի չերթայ: Ժամանակ մի Եւրոպայի համար անցագիր կուտային, սակայն երաշխաւոր մի կ'ստանուն ճամբորդին Ամերիկա չերթալուն համար: Իսկ այժմ օսմանեան հպատակ Հայու մը համար չատ գծաւոր կամ մինչև իսկ անկար լի է անցագիր ստանալ Եւրոպայի համար: Շատ լաւ չեմ գիտեր, բայց հաւանօրէն ծանօթ վաճառականներու շատ դժբութիւն չեն յարուցուիր այս մասին: Ձեմ գիտեր թէ այս բոլոր խոստովութիւնը իրենց նպատակին կը հասնին կամ ոչ, բայց Ամերիկա երթալու փափաքը կ'աճի ժողովրդեան մէջ և գացողները կը շատնան: Սակայն թերեւս աւելի շատ Հայեր պիտի գիմէին դէպ ի նոր Ալլաբա, եթէ ազատութիւն տրուէր: Շատ չեմ ցաւիր որ կառավարութիւնը ջանքեր կ'ընէ Հայոց այս գաղթային հոսանքը կասեցունելու համար, սակայն կը ցաւիմ որ այս պատճառաւ կամ պատրուակաւ շատ մը գործի տէր և «Հաւատարիմ» մարդիկ նեղութիւն և վնաս կը կրեն: Շատ չեմ փափաքիր որ Հայ երիտասարդը գունդագունդ Ամերիկա գիմեն, վասն զի չեմ կարծեր որ ասոնք ազատ երկիր կ'երթան Հայրենասիրական շարժմանց մասնակցելու կամ գինուորութիւն սովորելով հայրենիք վերադառնալու համար (ինչ որ կառավարութեան կառնածն է): Այս երիտասարդներէ շատեր դէպ արեւմուտք կը գիմեն ազատութիւն և հանգստութիւն վայելելու, հարստութիւն գիգելու և հայրենիք չվերադառնալու համար: Կը տեսնեմ թէ հայկական գաղթային այս շարժման ներքեւ շատ բարձր շարժառիթ չկայ: Ժողովրդեան մէկ մասը կրնայ գաղթելով ազատել ինքզինք ճնշումէ, հարստահարութենէ և տեսակ տեսակ վտանգներէ: սակայն ի՞նչ պիտի ընեն իւր մնացեալ եղբարք: Եւ միթէ գաղթելով պէտք է դարձան տանել Հայոց կացութեան ի թուրքիս:

Կ'արժէ նաեւ գտադիր մ'ունենալ տպագրական խոստովանեց վրայ, որք հոյ լրագրաց կամ հոյ հրատարակութեանց յատուկ չեն: Հարկ չկայ յիշել թէ օսմանեան վեհապետին և կառավարութեան, մահմետական կրօնին և ժողովրդեան նկատմամբ ամենաթեթեւ

քննադատութիւն մը իսկ անկարելի է հրատարակել: Անկարելի է նաեւ Հայոց թագաւորութեան կամ անցեալ պատմութեան և Հայաստանի յիշատակութիւնն ընել: Սակայն արդէն բաւական ատենէ ի վեր վարժուած էինք այսպիսի բաներ չկարդալ: Իսկ հիմա ուրիշ կարգ մը խոստովանեց կ'երեւին: Ձեռք կարդար կրօնական վիճաբանութիւններ, չենք կարդար քննադատութիւններ՝ ի թուրքիս ճանչցուած կրօնի մը վրայ, օտար կառավարութեան և վեհապետաց վրայ: Օրինակի աղագաւ, անգղիերէն թերթի մի Լորտ Սալզալըրի աշխարհավարութեան նկատմամբ ըրած քննադատութիւնը չի կրնար հրատարակուիլ ի թուրքիս: Եւրոպայի վեհապետք և նախարարք հոս կը վայելեն այն շնորհքը զոր չեն կրնար վայելել իրենց երկրաց մէջ: Երբ հայերէն թերթի մի խափանուիլը լսէք, մի կարծէք թէ այդ թերթը «Մամուլ» ի երբեմն հրատարակածին նման օտանաւոր մը հրատարակած է, այլ պատճառը այն է որ թերեւս Ռուսիոյ Ձարին կամ Գերմանիոյ կայսեր դպած է քիչ մը, թերեւս յանգէտ, կամ պապականաց փոքրինչ անհաճոյ լեզու գործածած է և կամ այսինչ ազգային պաշտօնէին ընթացից նկատմամբ քննադատութիւն ըրած է: Ռուսիոյ դեսպանէն սկսեալ մինչև սոսկական անհատ մը կրնայ Տպագրական Տեսչութեան գիմել և թերթ մը խափանել տալ կամ անոր մէկ յօդուածին շարու նակութեան հրատարակութիւնն արգելել: Լրագիրք գրելէ պարտաւորած են նաեւ գրել ոխալ և իրենց անհաճոյ բաներ: Լրագրաց մէջ վեհ. Սուլթանի անունն անպակաս, և նորին վեհափառութեան կը վերագրուին ամեն իմաստութիւն, գիտութիւն, հայրական հոգածութիւն, ևն: Պատրիարքը հիւանդ է կը գրուի, որ աստեն հրաժարած է: Քանի որ պատրիարքին անունը յիշեցինք, ըսենք թէ չգիտցուիր որ երբ պիտի վերջանայ իւր հիւանդութիւնը: Քանի մը օր չգար Պատրիարքարան, ապա կուգայ. քանի մը օր նորէն չգար, ևն: Որոշ չգիտցուիր թէ ի՞նչ է նորին Սրբազնութեան այս վարմանց պատճառը:

Ամեն ոք անձկանօք կը սպասէ լսել Նորմեան սրբազանի պաշտօնին վաւերացման լուրը: Իցիւ թէ ժողովուրդը յուսաւոր չըլլար:

Կ. Պոլիս 30 Յուլիս 1892

ԱՆԱՆՈՒՆ

ՆԱԽԵՎ ՍԵՐԸՍԻՆՅԷՆ

(Այս նամակ օտար լեզուաւ ուղղուած է մեզ, հոս կը գնեմք թարգմանութիւնն:)

Տէր,

Ձեր նամակն ստացայ և կուգամ պատասխանել Ձեր խնդրոյ ի հակիրճ բան քանզի չունիմ բազում ինչ պատմել հետաքրքրական: Կարծեմ թէ «Հայկական խնդրոյ» մասին Սերաստիս այս տարի աւելի հանդարտ եղած է քան անցեալ մի քանի տարիներն: Կառավարութիւնն երբեմն երբեմն Հայեր կը ձերբակալէ. անշան պատկերի մի գիւտն այսինչ տան մէջ, կամ թշնամոյ միկողմանէ ըսուին թէ այն ինչ անհատ անվստահելի է — այսպիսի բաներ միշտ բաւական պատճառ կը համարուին ձերբակալման: Բայց ժամանակէ մ'ի վեր լսած չեմ որ Սերաստիոյ դատարանն յաջորդ կրկն լինի զոք կամ երկար բանտարկութեան դատապարտած:

Դէպք մի տեղի ունեցաւ որ թէպէտ քաղաքական հանգամանք չունէր, լաւ կը բացատրէ միջին թուրք պաշտօնակալաց կացքն հանգէպ Հայոց, — Առաւօտ մի թուրք պաշտօնեայ մի իւր բնակարանէ կ'երթար կառավարութեան պալատն, և մինչ փողոցն ի վեր կը յառաջանար նա, պատահեցաւ որ հոյ երիտասարդ մի ձիու հեծած նորոտ ետեւէն կ'երթար: Թուրք մի պոռաց թէ այս երիտասարդ ցեխ կը ցայտեցունէ պաշտօնին վերայ, թէպէտ Հայն երբ տեսաւ թէ պաշտօնէին մօտ էր

խակոյն ջանաց կատեցունել ձին և ճամբէն դուրս ելնել: Պաշտօնեայն լսեց աղաղակն և հրամայեց իւր սպասաւորին բռնել զերթասարդն և տանել ի պահականոց, ուր զնաց և ինքն և մերկացունել տալով զնա՝ ծեծել տուաւ զինուորացն այնքան չարաչար զի հէքն մահամերձ վիճակի մէջ տառապեցաւ օրերով:

Յարեւելից Սեբաստիոյ, յԱրաբկեր և Սարբերդ, շատ անհանգստութիւն կայ կ'ըսուի: Կը թուի թէ Արաբ կերի Հայերն իրօք կառավարութեան կասկածն զարթուցանելու բնութիւն ունեցող ընթացքի մէջ գտնուած են, և մէկ դէպքի մէջ զինուոր մի կամ աւելի կորուսած են իրենց կեանք: Բագում ձերբակալուէնք սեղի ունեցած են և մին կամ երկուքն ի Հայոց մահու վճիռ ընդունած են: Տարակուսելի է սակայն որ ծայրագոյն պատիժն գործադրուի քանզի Սուլթանն շատ նախապաշարեալ է մահու պատժի դէմ:

Սարբերդու գաւառին մէջ վերջերս ճամբորդած անձերէ իմացայ թէ այն կողմի Հայերն կը զինուին: Իրողութիւնն այն է թէ անհանգստութեան և անասուգութեան զգացում կը տիրէ թէ՛ Հայոց և թէ՛ Թրքոց մէջ ամեն ուրեք: Հարստաշարութեան և չփութութեանց գրոյցներ շարունակ կը լսուին. սակայն առաւել քան տարակուսական է թէ ո'նէ ընդհանուր կազմակերպութիւն Հայոց մէջ եղած է կամ կրնայ լինիլ:

Մինչև ցարդ բոլոր այս յուզմանց արդիւնքն այն էր թէ Թուրքն նոր առիթ գտած է կաշառ կրծեւելու, և Հայոց մէջէն վատերն նոր պատեհութիւն գտած են կառավարութեան հաճելի լինելու, միանգամայն իրենց համազգեաց դէմ հին կամ նոր ռեբելներ գոհացում տալու՝ յայտնելով դաւաճեցութիւններ և մատենելով անվտանգութիւններ: Ողբալի է այս. և սակայն Թրքին ազահութեան և շատ հայերու նախանձուն և մատնչութեան շնորհիւ գուցէ դեռ նոր բաներ լսենք երբեմն երբեմն:

Ձերդ ևն ...

ՆԳԻՊՏԵԱՆ ՆԵՄԵԿԱՆԻ

ՆԱՄԱԿ Գ.

Գահիրէ 1 Յուլիս 1892

Բարեկամ, Յունիս 7ի կիրակէ օրը բանաստեղծական նկարագրութեամբ հանդէս մի տօնեցինք հոս: Հարկաւ լսած էք քաղաքիս Բարեգործ. Ընկերութիւնը բարի սովորութիւն մ'ունի՝ որուն համեմատ ամեն տարի Ազգ. Սահմանադրութեան տարեգարծի առթիւ հանդէս մը կը կատարէ իրեն պատկանած սրճարանի մէջ: Այս անգամ նախորդները գերազանցող չքեղութեամբ մը, օր առաջ զարդարած էին թէ՛ սրճարանը և թէ՛ հանդիպակաց ծառուղին: Հանդէսին նախընթաց աւուր տեղական բոլոր լրագիրք, իրենց ներքին լրոց բաժնին մէջ, այս առթիւ հայկական սրճարանի մէջ տեղի ունենալիք խորխոսանքութեան յայտագիրն հրատարակած էին:

Ամեն ուրեք մանաւանդ աստ ի Գահիրէ, սահմանադրասիրական ծայրայեղ հակում մը կ'ընդնմարուի յորմէ հետէ Ալըգեան ապիկար Պատրիարքի շնորհիւ Ազգ. Սահմանադրութիւնը թաղուեցաւ: Այնպէս, մինչդեռ Ալըգեան և իւրայինք Սահմանադրութեան սառուցեալ դիակին վրայ կանգնած բեւեռային ճերմակ արարածոց նման հոնկէ դուրս ելնելիք պարարտ որսի մը կը սպասեն, մենք ալ «փախած ձուկը մեծ կը լինի» առածին հետեւելով սկսանք սրտառու զամբանականներ կարգալ ողբացեալ Սահմանադրութեան ցուրդ գերեզմանին վերայ, և այս շատ իրաւամբ, վասն զի ո'վ իմէնջ է համոզուած վերջապէս թէ զամբանախօսական արհեստը հայուն ցեղային նկարագիրը յատկանշող ախտաբանական երևոյթից կարգը դասուած է. գոնէ կեանքերնուդ մէջ մէկ օր պատահած էէք լսել յուզարկաւորու-

թեան հանդիսի մի առթիւ, քարոզիչ վարդապետի մը կամ տոննարան պարոնի մը արտասանած մէկ ճառը, որուն արժանի համարուած առաքինութեանց նշոյլն անգամ թերեւս մտքէն անցուցած էէ հէք ննջեցալը:

... Սահմանադրութեան ստուերին ետեւէն վազելով ազգասէր եղած չենք ըլլար, ինչպէս Թրքամուր եղած չեն ըլլար հարկաւ անոնք որոնք հանդէսին տաք միջոցին համիտիյէ քայլերգը նուագել տալով՝ երիցս «Բատիշահըմըղ չօք եաշա» որոտագոչ աղաղակը բրցուցին: Այս վերջին նկատողութիւնը ընել պարտաւորեցանք՝ էէ թէ քաղաքական դաւանանքի տարբերութեան տեսակետով՝ այս հասկցունելու համար սոսկ թէ, սկզբունքի մը էութիւնը կը քննուի միայն և միայն զայն արտայայտող ձևերու մէջ, և ձևերու լաւագոյնը, աւելորդ է ըսել, ուրիշ բան էէ եթէ ոչ անկեղծութիւնը:

Յօդք մ'եւս: Այն մեծ ոգեւորութիւնը զոր ամեն տարի Սահմանադրութեան տարեգարծի առթիւ կ'երևի հայկական սրճարանի շուրջը, օտարաց սա համոզումն կը ներշնչէ թէ հայերը ինքնավարութեան այնքան արժանի ազգ մ'են որ օտար հողերու վրայ անգամ պարծա նօք կը տօնեն իրենց ներքին կեանքը սահմանադրող այն պետական առանձնաշնորհման տարեգարծը: Եւ դարձեալ, հայ երիտասարդութիւն ըսուած այն խառնիճաղանձը, որ բերաններու անհեթեթ ծամածռմամբ և ձայններու հօթեթութեամբ աններգ աշնակութեամբ զինուորական նուագածուաց խմբին ձայնակցելով հանդէսին շուրջը գամ մ'են աւելցուցած ըլլալ կը կարծէ, չարաչար կը սխալի, վասն զի այն օտարք որ քիչ մը առաջ զմեզ գովելու յօժարած էին, իրաւունք կ'ունենան կուշտ կերպով ալ ծիծաղելու:

Գանք բուն հանդիսին նկարագիրը տալու մի քանի տողի մէջ:

Սրճարանի արտաքին դրան ճակատին վրայ դափնեայ պսակներու մէջ՝ զետեղուած են պատկերք Վեհափառ Սուլթան Համիտ Բ. Կայսեր և Նորին Իշխանական բարձրութեան՝ համայնից սիրեցեալ՝ Ստիվ Ապպաս Փաշա Բ. ի, իսկ ի ներքս սրճարանի, հայոց երկու մեծ Իււցազանց Հայկայ ու Վարդանայ մեծադիր նկարուց սուրնթեր՝ կարմրագեղ զարթալաթերու մէջ ընկողմանած է ալ լեզարդ ճակատն Ամեն. Սրբմեան Հայրիկի:

Միջօրէէն զկնի ժամը 7ը կը հնչէ. հորիզոնի առեւտան Սահմաններէն փեռեկտուած հրավառ մատներ՝ շիջելափառ արեգական մարամտի թափորը կ'ուրուագեն. փոքր մի ևս, և ահա Գահիրէ, հնոյն արեւելքի հրաշագեղ այս թագուհին, ճակտին դրած լիալուսնոյ հրանուտ սկաւառակն՝ կ'ուզայ բազմիւ իւր աստեղազարդ գահոյից վերայ: Այս միջոցին բնութեան և գիտութեան միացեալ լուսոց ակնախտիզ հեղեղատ մի կը արտահոսի բովանդակ հանդիսավայրէն: Երկսեռ հանդիսականաց՝ ընդ որս և պարկեշտասուն հայուհեաց զոյգեր՝ գրաւած են արդէն մերձակայ ծառուղոյն ստորեւ շարուած բազմաթիւ թիկնաթոռները: Յանկարծ դրոտալիք փամփերու մեծաշունդ բամբուլնք վերուստ ի վայր կը զղրդեն հայկական սրճարանի առատաղն, զին ուրական նուագածուաց ստուար ջոկատն է, զոր ըստ կանխորոշ կարգադրութեան սրճարանի կեդրոնավայրն կուտակուած Ստիվին թեթեւ քայլերգը կեղանակէ: Կը հասնի ապա վայրկեան մի յորում հարիւրաւոր հայ սըրտեր իբր ի մի զապանակէ մղեալ անհնարին կը թրթռան ազգային սուրբ զգացմամբ առլցեալ կուրծքեր հեւ ի հեւ կը փեռեկտուին, կարծես հմայք մը կայ պահուած այն փալիւլուն շեփորաց մէջ որք ընդոտ պայթեցան որոտալով՝ «Արիք հայկազունք» հայկական քայլերգը: Այնուհետեւ, մինչև կէս գիշեր, մի ըստ միով երգուեցան «Ի զուր ամպեր» «Ի բիւր ձայնից» և այլն հայկական քաղցրալուր նուագներ:

Երկնից մթին անջրպետը ակօսող լուսահետ հըրթիւք որք շարունակած էին մինչև կէս գիշեր, այլ եւս

ուպառած էին իրենց կայծակնացայտ հատիկներու վերջին կաթիլներն, հրախաղաթիւնք դադարած և պէնկալեան լոյսերու բեկանուտ շիթեր գողցես ըմպուած էին սեւ-թոյր գիշերէն, երբ համատարած մթութեան մէջ երկ-նաճեմ գշտոյն ի գէնիթ ամբարձած՝ 'Հազարաւոր հան-դիսականաց' որք քաղցր տպաւորութիւն մը կը տանէին իրենց հետ, ողջերթ կը մաղթէր լուսեայն:

ԱՆԱՉԱՌ

Մ Շ Ս Յ Դ Ա Շ Տ Ը

ԱՒԱՉԱԿԱՏՈՂՄ ՊԵՅԸ

ԱՐԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ—ՕՐՀԱՌԱՅԱՆԻ ՄԸ ՈՒՂԵՐՁԸ

Տարօնոյ և Սասնոյ նկատմամբ կարդացած վերջին աղէխարը լուրերն յիշեցուցին ինձ մի գէպք, որ ուղ-ղակի կապակցութիւն ունի ներկայ շարունակեալ աղէ-տից հետ, և որ բաւական որոշ գաղափար մը կրնայ տալ թէ Տարօնեցին որչա՛փ իրաւամբ և ստիպեալ գրգռեց Սուլթանի և իւր պնակալէզներու զայրութիւնը, որ Հիւ-սիւսի մորթիկներէն յաւէտ խոտաշունչ սկսաւ ծեփել մերկ հայ գիւղացին, որոյ բողբոջ խռովութիւն՝ և ան-ձին ու ընչից պաշտպանութիւնը յեղափոխութիւն հա-մարուածէր:

Վերջին գէպքերն կը հաստատեն թէ, այդ համո-զումը ժողովրդեան միտքը յեղափոխեց, նորա մկանանց մէջ պրկեց բազկի գինաբարձ ջիղերը, նորա որտին մէջ յառաջ բերաւ ոչ այնչափ վրէժ, որչափ յանդգնութիւն և աշաց մէջ վառեց արհամարհանաց գէպման հուրը, ընդգէմ ամեն տեսակ դժուարութեանց և վտանգի:

Մուսայ Պէյի և Մշոյ հայ գիւղացւոց միջև բաց-ուած դատը և նորա անակնկալ վախճանը 1889 տարւոյ ամենանշանաւոր գէպքերէն մին եղաւ Հայութեան հա-մար, զոր անշուշտ և ոչ մի Հայ կ'անգիտանայ, բաց ի մանրամասնութեանց, որք սակայն շատ նիւթ կարեն մատակարարել մեր ազգային նկարագրի բարեշրջման և ներքին կեանքի նոր երևոյթներուն հետաքրքիր գրիչնե-րու և նոյն իսկ վիպագրաց:

Մանրամասնութեանց միւսէլէ և առանձին գէպքեր գիտելէ առաջ թերեւտ աւելորդ չպիտի լինի նկարագ-րել Մամիկոնեանց երկիրը—Մշոյ դաշտը—ըստ տեղական հարկի և ոչ վիպագրի մը գեգերոտ քայլերով:

Մշոյ դաշտը, իբր հարիւր մղոն երկայնութեամբ և 20—25 մղոն լայնութեամբ, գեղեցկադիր լեռնադաշտ մ'է, Բզնունեայ—Վանայ—լճին արեւմտեան—հիւսիսային կողմը, Տօրոսի շղթայից մէջ ամփոփեալ, իւր կուրծին վրայ տարածեալ են իբր 100 հայաբնակ գիւղեր, որոց ամենուն զբաղումն ալ երկրագործութիւն է, բոլորովին յաւապետական դրութեամբ, տնտեսական և քաղաքա-կան հզօր պատճառներ երիտասարդութեան երեքչորոր-դը կը մղեն յօտարութիւն:

Սոյն դաշտին—Տարօնոյ—ամբողջ երկայնութիւնը կէս կտրելով կ'անցնի Եփրատայ մի ճիւղը Մեղրագետ անուամբ, առանց սակայն մի օգուտ ընծայելու բաց ի իւր եզերաշէն գիւղորէից առանին գործածութեան հա-մար բաւական ջուր ու ձուկ հայթայթելու, ոոյն կտրոնի հիւսիսային կէս մասը Ոստեն (անջրդի) կը կոչուի և նշանաւոր է իւր ցորենի ճոխ և ընտիր արտադրութեամբ զոր սակայն Ոստենցին շահաւոր գնով վաճառելոյ հա-մար չկրնար արտածել:

Բզնունեայ ծովուն եզերամերձ դաշտի մասը Չը-խուր կանուանի, որոյ ներքին և յուսէտ սարամօտիկ գիւղերն քրդախառն կամ զուտ քրդաբնակ են, այդ պի-տի փոքրիկ գիւղեր կան նաև շրջակայ շղթայից մէջ տեղ տեղ, ամենքն ալ ամենայնիւ աննշան և ենթակայ դրա-ցի քիւրդ ցեղերու կեղեքմանց որք հարուստ ու հզօր

են և Սուլթանի մեծարանաց և յատուկ խնամոց ար-ժանի:

Դաշտի սոյն մասի մէջ որջացեալ էր ահա Մուսա Պէյ իւր արքանեակներով և իրմէ ոչ շատ հեռի կը գըտ-նուէր Վարդենիս այն պատմական գիւղը՝ որ քաջու-թիւն ունեցաւ առաջին անգամ ինքը գէն բառնալ ա-հարկու Մուսայի գէմ և նոյն իսկ աւարի փոխան սուր և զոհի փոխան զոհ կորզել աւագակատոհմ Մուսա Պէ-յէն:

Այսօրինակ մի յախուռն ընթացք ստակալի կեր-պով ցնցեց վայրագ հրէշին ջիղերն, որ երգուաւ յանուն իւր բոլոր շահատակութեանց անմոռանալի դաս մի տալ յանդուգն Վարդենիսի, վասն որոյ յաճախ յայտնի ու գաղտնի ամեն ջան ի գործ դրաւ, բայց քաջն և արթու-նըն Վարդենիս կրցաւ նորա ամեն յարձակմանց կուրծ տալ, մինչև գէն ուղղել նորա թիկանց:

Շաքոնակէլէ

ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

«ՄԱՐԶԱՐԱՆ»Ի ԼԵՁՈՒՆ

Գ. Գասպարեանի «Մարգարան»ն որպէս կ'ըսէ Առնէնիս, «ժամանակաց նշան մի» կրնայ համարուիլ իբ-րե գինուորական կրթութեան դասագիրք: Գիրքն ու-շադրութեան արժանի է նաև իբրև նոր ինչ, վասն զի հայ գրականութեան մէջ առաջինն է իբրև պատերազմի արհեստին վերայ խօսող աշխատութիւն: Ի հարկէ նոր բառեր և մանաւանդ նոր ասացումներ կը գտնուին գրքին մէջ. և աւելորդ է ըսել թէ մարգանքներու պար գերէն սկսեալ կարդաւ պէտք է կարդալ որպէս զի բարդերն հասկցուին:

Յեւրոպա հրատարակուող Հայերէն թերթ մի «Մարգարան»ի վերայ տարօրինակ քննադատութիւն մի ըրած է սա խօսքով. «Հայերէն այնպիսի անճոռնի լեզ-ուով գրուած է, կ'ըսէ, որ կարդացողը ոչինչ կը հաս-կնայ եթէ հեղինակն ալ իր մօտ գտնուելով չբացատրէ գրուած մարգանքները»:

Այդ քննադատութիւն կարդացողներն անշուշտ կը կարծեն թէ «Մարգարան»ն անհասկանալի հետեապէս անշահ գիրք մ'է իւր անճոռնի Հայերէնի պատճառաւ, ուստի աւելորդ չեմք համարիր աստ երկու կամ երեք մարգանք կամ սկզբունք արտատպելով «Մարգարան»ի Հայերէն լեզուին վերայ գաղափար մի տալ ընթերցո-ղաց:

«Մ. Հ. (Մարգիչն Հրամայէ.) Հանդիսի ՀԱՆԳԻՄՍ.— Տար աջ ոսքդ ուղղակի ետեւ երեք մասնաշափ, ձախ ծունկդ քիչ մի թուլցուր, նոյնժամ բեր ձեռքերդ առ-ջեւ մարմնոյդ կեդրոնին վրայ, ձախն ի վերայ աջի, ձախ բթամատն աջ ափի մէջ: (Տես երես 23, ՀԱՆԳԻՄՍ):»

Երկու տեսակ կրակել կայ, ուղիղ և շեղ

Ուղիղ կրակելու համար միայն կը հրամայուի—

Քառեակն՝ ՆՇԱՆ, ԿՐԱՎ:

Իսկ շեղաբար կրակելու համար, ՆՇԱՆ բառէն ա-ռաջ կը յաւելու շեղ դէպ յաջ կամ շեղ դէպ ձախ բառերն. ի հրամանի շեղ դէպ յաջ՝ եթէ երկու շարք են, առաջին շարի մարգիկը կ'ուղղեն իրենց նայուածքն դէպ յաջ գտնուող առարկային, ինչպէս երկրորդ շարի մարգիկը նոյն կը կատարեն ձախ ոտքերին փոքր ինչ դէպ յաջ յառաջ տանելով: (Տես երես 49)

«Հեծելազօրաց կռիւն է միշտ յաճակողական, սոքա բնաւ չեն սպասեր որ յարձակում կրեն, այլ թշնամին տեսածնուն պէս՝ պէտք է կամ խոյս տալ կամ յարձա-կիլ:» (Տես երես 97)

«Այլ և այլ նշաններով կամ գոյնգոյն դրօշակ-ներով և ջահերով տիւ եւ գիշեր բանակցութեան մշտ-նելու են խմբեր, նախապէս հասկացողութիւն ունենա-լով. այժմ այսպիսի յարաբերութիւնք գրեթէ կատա-

ընկերության հասած են հեռագրական թերթերու և ձայնագրերներու միջոցաւ, բայց ի բացակայութեան սոցա՝ կըրնան հին միջոցներն ի գործ դրուիլ: Օրինակի համար, ցերեկ ատեն կրնան գործածուիլ դրօշակներ՝ ձերմակն ցոյց կուտայ թէ ամենայն ինչ խաղաղ է, իսկ եթէ դրօշակն կը պարունակէ իւր կեդրոնն կտոր մը կարմիր, յայնժամ կ'իմացունէ որ զգուշութիւն պէտք է: Համակ կարմիր դրօշակն ցոյց կուտայ վտանգ: իսկ եթէ սա վերու վար կը շարժի, ըսել է թէ օգնութիւն կը խնդրուի:» (երես 101)

Այս առթիւ կը ծանուցանեմք թէ «Մարզարան»-ի գինն 50 սէնթի իջեցուցած է հեղինակն (2 Փր. և կէս):

ՆԵՄՈՒԿ ԿԻՂԻՍԵՆ

Կիլիկիայէն Յուլիոս 22 թուակիր թղթակցութեան, զոր ուղկեկ ստացանք, կը հաղորդեմք մեր ընթերցողաց հետեւեալ համառօտութիւնն:—

Մի քանի օր առաջ Հայէպ տարուեցան Մարաշի մէջ վաճառական եղող Զէյթունցի Մովսէսը⁽¹⁾ և ուրիշ երկու Զէյթունցիք, ինչպէս նաև Մարաշէն Յովհաննէս Էֆ. Սահակեան, Մանուկ Էֆ. Գարամանլըեան, Յովհաննէս Էֆ. Թովալեան, Յակոբ Էֆ. Տէօվլէթեան: Կ'ըսուի թէ նոյն իսկ Զէյթունցի մի քանի հարուստներ են մատնիչներն և թէ սերիշներ ալ դեռ պիտի մատնուին: — 22 առաջին դատապարտելոց համար Պոլսէն ազատութեան հեռագիր եկաւ: Հնդամեայ բանտարկութեան վճիռ ընդունածներուն երկուքն թրքացած են կը ըսուի: Եպիսկոպոսին և մուհապէթճի Տէր Ղևոնդին վըճիռներն անփոփոխ կը մնան:

Շարաթ մի կայ որ Այնթապու Փռանձական հիւպատոսն բաղդ ունեցաւ իւր կռնակի վրայ փորձն առնուլ թուրք հարուածոց վայրագութեան: Հիւպատոսն Ղալախլընը պտըտել գնացած էր, երբ Տաճկի տղայ մը կեաւոր կեաւոր կը կանչէ և շատ կը ձանձրացունէ զինքը: Վերջապէս հիւպատոսը հրաման կուտայ զաճասին բռնել տղան: Անդիէն թուրք մի վրայ կը հասնի և թող տուէք տղան կ'ըսէ: Մինչ այս մինչ այն՝ թրքեր կը ժողովին և թէ՛ հիւպատոսն թէ՛ զաճասն լաւ մի կը ծեծեն: Գաճասին գլուխն վիրաւորուած է և հիւպատոսն ալ այնքան վնասուած որ չորս հինգ օր անկողնոյ ծառայելէ յետոյ կըրցաւ երթալ Հալէպ: Կը զրուցուի թէ Հալէպէն վաչտ մի զօրք պիտի գայ յանցաւոր թրքերն ձերբակալելու: այսօր ալ լսեցինք թէ Պոլսէն 12 հոգիէ բաղկացեալ Մասնախումբ մի պիտի գայ դարձն քննելու:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—Տիար Կլաւսթընի հաղորդելու համար Նիւ Եորքի Հայ Գաղթականութեան անուամբ հետեւեալ հեռագիրն ուղղուեցաւ ի Լոնտոն առ Փրոֆ. Մ. Զերազ:—

«Նիւ Եորքի Հայ Գաղթականք կը խնդրեն Ձեռն շնորհաւորել յանուն իւրեանց զՄր. Կլաւսթըն բարեկամն բոլոր հարստահարելոց, յիշխանութիւն դարձին առթիւ:»

—Վուսթըն 04. 3ին կը գրեն մեզ:—Քաղաքիս Առողջապահական Ժողովն Հայոց մի քանի տներն այցելելով չափազանց անմաքուր և վատառողջ գտած են բնակարաններն, և դուրս հանած են Հայերն, և յայտարարած ալ են թէ այսուհետև Հայերու զատ տուն պահելու թոյլտուութիւն չպիտի լինի եթէ մաքրութեան հոգ տանող տանտիրէին կամ խոհարար չունենան:

Կարծեմ մեր Հայրենակիցներ շատ աւելի անպատուեալ և գուցէ նոցա ներգաղթումն ի Միացեալ Նահանգ

գըս արգելուած կը լինէր օրինօք եթէ Պրն. Գրիգորեան ունի Վուսթընի մէջ չափազանց խռնեալ հայերէն խումբեր չտանէր շրջակայ ուրիշ քաղաքներու գործարանաց մէջ աշխատեցնելու: Իրաւ է թէ յիշեալ Պարոնն այդ բանը ըրաւ իւրեւ գործ, և դրամ առաւ ամեն հայէ որուն այդպէս գործ գտաւ, բայց և այնպէս նորա շնորհիւ է որ Վուսթընի մէջ Հայոց խեղճութիւնն և անպատուութիւնն չհասաւ վերջին աստիճանին:

Քաղաքիս Հայ Գաղթականութիւնն պատուաւոր գործ մ'ըրաւ անցեալներ. մի քանի հարիւր թալէս հաւաքելով տուաւ այն հիւանդանոցին ուր բազում Հայեր ձրիապէս կը դարմանուին ամեն տարի:

—Բօտ Ալընտի Վունսօքէթ քաղաքէն կը գրեն մեզ Օգոստոս 8ին:—

Մէզըէյի Ոստոմնասիրական Ընկերութիւնն իւր կազմակերպութեան առաջին տարեդարձն կատարեց ի Միլվիլ, Օգ. 1ին: Ուսթընի, Միլվիլի և Վունսօքէթի Մասնաճիւղերու պաշտօնեայք, շատ անգամք և հիւրեր ներկայ էին հանդիսին: Պարոնայք Յարութիւն Գրիգորեան, Յարութիւն Պէրպէրեան, Յ. Տէր-Ստեփանեան, Խ. Յարութիւնեան և այլք ատենախօսեցին մեծ ոգեւորութեամբ, որք ազգային երգերով և նուագածութեամբ կ'ընդմիջուէին իրարմէ: Գանձապետն Պարոն Սարգիս Մուշեղեան ներկայացուց հաշիւն, որմէ շատ գոհ մնացին ամենն, և գումարն աճեցունելու համար նոր հանգանակութիւն մ'ալ եղաւ, որով ամբողջ գումարն յանգեցաւ ի 250 թալէս:

Ատենադպիր Ատենապետ
Յակոբ Մ. Գրիգորեան Յարութիւն Պէրպէրեան

—Ֆիշպուրկէն (Մասաչուսէց) Օգ. 5ին կը գրէ Տիար Պետրոս Կ., տեղւոյն Հայոց եռանդուն առաջնորդըն:— Հոս Հայերու վիճակ լաւ է. նոքա մաքուր, տնտես և կոկիկ կ'ապրին և ընկերութեան առջեւ աղէկ դիրք ունին:

Ամեն կիրակի օր ժողով կ'ընեմք, ուր ըստ իմ պաշտօնիս՝ ժամանակին մեծ մասն կը նուիրեմ ձեր խմբագրականներն ժողովրդեան պարզ լեզուաւ բացատրելու և ժողովուրդն ախորժանօք կը մարտէ զայնս: Ուսեալ դաս մալ ունիմք աստ, լաւ ենք և յուսացող ի ձեզ. տեղական թերթեր շարունակ կը գրեն մեր ժողովներու վրայ:

—Տիար Սթայն Ֆիլատէլֆոյ Peacemaker ամսաթերթին մէջ նոր յօդուած մի հրատարակած է «Հայկական Ինքնավարութիւն» խորագրով, հանդերձ Հայաստանի փոքր մէկ աշխարհացուցով, յորում կարմրադոյն նշանադուած է այն մասն որոյ ինքնավարութիւնն կը ջատագովէ ձեռնհաս յօդուածագիրն. (Տես Օգ. ի թիւն):

Տիար Պաղտասարեանի «Ձայն մի Արարատ լեռնէն» անգղիերէն երկասիրութեան գինն 25 սէնթի իջած է ի դիւրութիւն ընթերցասիրաց:

«Լ'Առմէնի»-էն կը տեղեկանամք թէ. «Հայաստան» թերթին հրատարակութիւնն վերջնապէս դադարած է և թէ խմբագիրն Մեծ. Տիար Սըվաղեան կը մեկնի Լոնտոնէն յեգիպտոս կամ ի Կիպրոս փաստաբանութիւն ընելու:

—Լոնտոնեան «Առմէնի»-ի տարին լրանալու մօտ է: Յաջորդ տարեշրջանին թերթն պիտի հրատարակուի դարձեալ Փռանսերէն հանդերձ անգղիերէն թարգմանութեամբ, ամիսն միանգամ, և բաժնեգինն պիտի լինի 15 շիլին (18 Փր. 75 սանթիմ, կամ 3 թալէս 75 սէնթ):

—«Հայք»-ի ներկայ թիւն ուշ լոյս ելաւ գիւղազնայութեան պատճառաւ, որոյ հետեւութեամբ 17դ թիւն ալ ճիշդ օրին չպիտի կրնամք ժմեցունել:

ՓՈԽՆԵՆԿԵՐԻՐ

Թուրքիա դրամ զրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և Եւրոպիոյ նշանաւոր քաղաքացի մէջ: Ամերիկայեան Հայք որ դրամ զրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի. Կիւլլապի Ս. Կիւլպէնկեան,

53 Cedar St. N. Y.

ՅՈՒՆԱՆԵՍ Մ. ՎՅԱՅՈՒՆԻ

Constantinople Bazaarի (Բոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառակաթեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն: Թէ ապրանքաց հարադասութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն:

Մինչ Սեպտեմբեր հասցէս է—

15 Grand Central Block, Saratoga Springs N. Y.

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԵԻՔԵՆԻԲՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆԻՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կըրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ չափ ալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:



**REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.**

A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tablets contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tablets are of great value.
Ripans Tablets cure headache.
Ripans Tablets cure constipation.
Ripans Tablets : for liver troubles.
Ripans Tablets : a family remedy.
Ripans Tablets : for sour stomach.

Հայեր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ունէ արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի շտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան:

P. SHALJIAN

9 SPRUCE ST. NEW YORK

ԳՐԲԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆՔ

ԳԻՆ ԶԱՓԱՒՈՐ

Կ Ա Ձ Մ Ը Ն Տ Ի Ր

MARK F. COSGROVE

ԿՈՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ԲԸՊՊԸՐՆԵՐ

78 Front St., Corn Bigelow Court

WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուսթըրի մէջ, ուր կրնաք գնել ամեն տեսակ կոշիկներ մոյկեր, և կոշիկի ընկալներ: Հրամէ եկուք անգամ մը և տես թէ ինչոր լաւ ընդունեցիւթիւն կուտանք մեզ այցելող Հայերուն:

N. DESCHAMPS

Ն. ՏԵՇԱՆ

Վուսթըրի Main (Մէյն) փողոցին 259դ թիւ խանութըն դիմացկուն և աժան կոշիկներ և մոյկեր կը վաճառուին: Պարոն Տէշան շատ քաղաքավար և պարկեշտ գործ ընող մէկն է և ամեն այցելու իրմէն գոհ կը մնայ: Փորձէ և պիտի համոզուիս:

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Ք Ե Ղ Ս Գ Ո Ր Ծ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE

NEW YORK CITY

16 և 17 դ փողոցներու միջև արեւելեան կողմն:

—Ընտիր Գաղղիական խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

HAGOPIAN

PHOTO-ENGRAVING CO.

3 Great Jones St. New York

Engraving for all purposes of
illustration in line & half-tone.

— «ՀԱՅՔ» ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թաւէն 5 սէնթի:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն
Մ. Ս. Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն